

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս. ԱՐԻՈՒՈՅՍ ԺԱՌԱՆ ԴԱՌՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԹԱՑԱՐԱՆԻ

1953 — 1954 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Ստեղծելով, փոքր լայնածավալ, կը ներկայացնենք Ս. Արառայ ժառանգ. վարժարանի եւ ընծայարանի ամսվերջի մրցանակաբաշխութեան հանդէսին առիթով, վարժարանիս Տեսուչ՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արառայանի կողմէ կարդացուած միամսյա գործունէութեան յեղեկագիրը:

Ամեն. Տ. Կղիշէ Ս. Արեւազ. Տէրէրեան

Բարեխնամ Պատր. Տեղապան Առաք. Ս. Արառայ եւ Նախագահ Պատ. Տնօրէն Ժողովոյ

Ամենապատիւ Ս. Հայր,

Ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը Աստուծոյ շնորհիւ բոլորելով իր կրթական 1953-54 տարեշրջանը, իր պաշտօնէութեամբն ու աշակերտութեամբը կուգայ այսօր իր խորին շնորհակալութիւնները յայտնելու Ձերդ Ամենապատուութեան և Ս. Աթոռոյ Վարչութեան, այն խնամքին ու հոգածութեան համար, որուն առաքելայն եղաւ ինքը այս տարեշրջանին, մանաւանդ մեր տնտեսական այս շատ անձուկ օրերուն:

Գործը որ մեզի յանձնուած է երկու տարիներէ ի վեր, շատ պատասխանատու է իր խորութեամբը, կապուած մատաղ սերունդի մը հոգիի, միտքի և փիղիքի կրթանքին:

Երեսօտէմի ժառանգաւորաց վարժարանը, այս փառաւոր և ազգին պանծալի Հաստատութիւնը, աւելի քան մէկ դարու իր կեանքին մէջ ազգին տուած է բազմաթիւ որակաւոր անհատներ: Հակառակ նոր պահանջներուն և կրթական արդիական մեթոտներուն, կրօնքին շունչը և ազգային ոգին երկու թևերը կը կազմեն կրօնական այս վարժարանին և այս ակներեւ է վարժարանիս թէ հին և թէ նոր բոլոր սերունդներուն մէջ:

Ամէնքս ալ քաջ գիտենք թէ արտասահմանի մեր ժողովուրդը որքան պէտք ունի իրապէս զարգացած հոգեորականներու և մանաւանդ աւելց՝ որոնք այս տեսակ կրկնակ սրբարաններէն է որ կուգան:

Ա. Կրօնական եւ եկեղեցական կեանք. — Անցնող տարւան ընթացքին, Ընծայարանի Բարեշնորհ Սարկաւազները և ժառանգաւոր աշակերտները անթերի կատարելոցին իրենց ժամանակաշտական և եկեղեցական հանդիսութեանց պարտականութիւնները: Ձանացինք միշտ հոգեւոր կեանքը զօրացնող միջոցներ ստեղծել մեր տղոց մէջ, զսաւաղութեանց պահելն զօրօս, շատցնելով անոնց հոգիին խորը՝ մեր նախնեաց մաքուր հա-

ւատքին ցուբերը, որոնց սրբազան աւագանն է ազգին այս Տունը:

Բ. Կրթական կեանք. — Անցնալ տարւոյ Հոգեւորներին վերաբացուեցաւ վարժարանը չորս դասարաններով: Լիբանանէն հասան տասնըմէկ նոր աշակերտներ, որոնց մէկ մասը զրուեցաւ երկրորդ դասարան, իսկ մնացածները կազմեցին առաջին դասարանը: Դասարանները բաժնուած են հետեւեալ կերպով: Զորբորդ դասարան 4 հոգի, որոնք այս տարւան ընթացքին, Ձերդ Ամենապատուութեան ուրարներ օտացան և ծառայեցին եկեղեցւոյ մէջ որպէս ուրարակիրներ: Երբորդ դասարան 4 հոգի, երկրորդ դասարան 12 հոգի, իսկ առաջին դասարան 8 հոգի:

Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալներէն.

1. Ձերդ Ամենապատուութիւնը
2. Գեր. Տ. Նորայր Սրբազան
3. Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. (Տեսուչ)
4. » Տ. Յակոբ Վրդ.
5. » Տ. Զաւէն Արք.
6. » Տ. Վարուժան Արք.
7. » Տ. Կիրեղ Արք.
8. Վեր. Էմբրի
9. Բար. Սիմոն Սրկ. Սիմոնեան (Փոխ Տեսուչ)
10. » Գէորգ Սրկ. Գրպրըսեան
11. Տիար Մովսէս ձանոյան
12. » Սահակ Գալայճեան
13. » Պետրոս Լէվիճեան
14. » Պիշարա Տէպպիլի
15. » Էտուարտ Միշէլ
16. » Խաչատուր Խաչատուրեան
17. » Յակոբ Աւետիքեան:

Տարւոյն ընթացքին, վարժարանէն ներս դասաւանդութիւնները եղան զոհացուցիչ, ըստ կրթական ծրագրի: Մասնաւոր հոգ տարուեցաւ լեզուներու զօրացման: Լիբանանէն հասած նոր աշակերտները զժրախտաբար չեն լրացներ մեր վարժարանի առաջին դասարանի ծրագիրը, հոն ուսումնական մակարդակը աւելի ցած ըլլալուն

համար, մասնաւորաբար լեզուական և թուազիտական հիւզերուն մէջ: Մեր շորթորդ դասարանի թուազիտական և դիտական դասերու մակարդակը հաւասար է խոստով մաթրիքիւլէյընի ճի Սի իի չափանիշին: Կարողութեանց տեսակետով վերի երեք դասարանները ունեցած են միջինէն վեր նիւթը և զո՛ւ թողուցած են թէ իրենց ուսուցիչները և թէ զպրօցի տեսչութիւնը:

Գ. Առողջապահական կեանք. — Գոհութիւն Աստուծոյ, անցնող տարուան մէջ չենք ունեցած որեւէ լուրջ հիւանդութիւն վարժարանէն ներս: Եղած են փոքրիկ ու սովորական տկարութիւններ միայն, որոնք դարձանուած են մեր սղոց, այսինքն ներթափանցող հոգածութեամբ: Իրրեւ առողջապահութեան մաս, անցնող տարուան



ԺԱՌԱՆԳ. ՎԱՐՃԱՐԱՆԸ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ

ընթացքին, ունեցանք օրական պատշտներ դէպի Վատը-Գըլթ, Այն-Ֆարահ և Գարունտէր, իսկ այս տարուան իննդեան և Զատիկական արձակուրդներուն զէպի երէքով և Գարունտէր:

Դ. Մարզական կեանք. — Վարժարանի մարզանքի և խաղերու ուսուցիչն է Գրն. Մոլսէս ճանոյեան: 28 աշակերտները բաժնուած են երկու խումբերու, ԿԱՐՄԻՐ և ԿԱՆԱՉ, իրենց ազատ ընտրութեամբ: Կարմիր խումբի խմբապետն է Տրց. Ենովք Տէր Գալուստեան, իսկ Կանաչինը՝

Տրց. Յովհաննէս Գաղանճեան: Ունինք չորս պարտաւորիչ խաղեր, Փութպոլ, պասքէթպոլ, վոլեյպոլ և փինկ-փունկ: Տարուան ընթացքին խաղցած են այս խաղերը կանոնաւորաբար իրարու դէմ, իսկ Յուլիս 17ին և 18ին ունեցան իրենց վերջին ախոյեանական մրցումները: Օտար խումբերու հետ ունեցած ենք երեք Փութպոլի մրցումներ, երկուքը յաղթած և մին պարտուած, իսկ պասքէթպոլի չորս հանդիպումներ, երեքը յաղթած և մին պարտուած:

Փակելէ առաջ տարեկան այս հակիրճ տեղեկագիրս, դարձեալ պարտք կը դրամ յայտնելու իմ շնորհակալութիւններս Զերդ Ամենապատուութեան, Պատուարժան Միաբանութեան և Տնօրէն Ժողովոյ անդամներուն, վարժարանի հանդէպ ունեցած իրենց ջերմ հոգածութեանը համար. նոյնպէս շնորհակալութիւններս մեր ուսուցչական կազմին, որոնք տարուան ընթացքին ըրին իրենց լաւագոյնը, վարժարանը իր այս գոհացուցիչ արդիւնքին բերելու համար:

Կը մասնաւորեմ նաև շնորհակալութիւններս Մեյրոնեան հանգուցեալ երկու հարազատներուն և մանաւանդ Վսեմ. Գալուստ Կիւլշէնկեանին՝ վերջերս իր ըրած իշխանական նուէրին համար: Շնորհակալութիւններ խոստանարեակ Տիար Սարգիս Պէնլեանին, որ տարեկան 150 Սթըրլինգ նւիրատուութեամբ սան մը կը պահէ մեր վարժարանին մէջ: Շնորհակալութիւններ նաև - Եօրթարեակ Տատուր Տատուրեան և Փիրէնեան Տանը, Վարժարանի աշակերտութեան իրենց ըրած զգեստի նուիրատուութեանը համար: Օրիորդ Սիրարփի Տէր Ներսէսեանին, իր անձնականէն երեք հարիւր տոլար և իր միջոցաւ ուրիշներէն հարիւր տոլար նուէրին, մեր սղոց նոր զգեստներ գնելու համար: Շնորհակալութիւններ նոյնպէս երուսաղէմարեակ Տիար Գրիգոր Մամնեանի և Լեոն Պէնլեանիկեանի, որոնցմէ առաջինը այս տարի եւս քաջալերելով մեր աշակերտները, նուիրեց 50 հատ արծաթ մետաղներ, իսկ երկրորդը արծաթագօծեց դանոնք: Խոր շնորհակալութիւններս և օրհնութիւններս բոլոր անոնց որոնք որեւէ կերպով ծառայութիւն մը մատուցին մեր կրթական այս Տանը:

Զայտոսիկ տեղեկագրելով Զերդ Ամենապատուութեանը,

Մատչիմ ի համբոյր Զեր Ս. Աջոյն

Խոնարհ աղօթակից

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԿՐԴ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Տեսուչ Ժառ. Վարժ. Ի և Ընծայարանի

24 Յուլիսի 1954

Ս. Արսա — Երուսաղէմ